

ՎՐԱՄԱՏԱՆ

«ՅՐԱՆՅԱՆՈ» (ՆԱՅՅԱՐՈՅՅՅՐ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ ԵՎ ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 106 - 107 (16195) ՇԱԲԱԹ, 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵՐԻ

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԻԱԿԸ, ԻՆՉ ՄԵՆՔ ԶՎԱՐՈՂԱՅԱՆՔ ԱՆԵԼ, ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆ ԷՐ»

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հայտարարությամբ, անցյալ տարի կառավարող թիմը չկարողացավ լուծել բիզնեսի զարգացման հարցը:



Պատասխանելով «Վիբրիս պալիտրա» թերթի հարցին, թե ինչին չի հաջողվել հասնել 2013 թվականին, Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց. «Դեռևս անելիքները շատ են եւ դժվարանում են ասել, թե որքանով էր հնարավոր այդ ամենը լուծել մեկ տարում: Վստահությամբ կարող եմ ասել, որ Վրաստանի գործարարները լրիվությամբ չի օգտագործվում: Դեռ շատ անելիքներ կան, որպեսզի քաղաքացիների բարօրությունը կախված լինի ոչ թե բյու-

ջետային ծախսերից, այլ նրանց ունակություններից ու գիտելիքներից: Մենք նաև որոշակիորեն չկարողացանք հիմնել դրական քաղաքական օրակարգ: Դա հաճախ թյուրիմացորեն գովազդ էին անվանում: Երկրի բնակչությունը պետք է տեղեկացվի ոչ թե գովազդի համար, այլ դրական քաղաքական օրա-

ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴՈՒԱԶ

ՎԱՌՎԵՑԻՆ ԵՐԿՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԱԾԱՌԻ ԼՈՒՅՍԵՐԸ



ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱԹՈՒԿ ԱՆՇԱՐԶԸ ՆՇԵՅՔ ԲՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Ամբողջ աշխարհում միլիոնավոր կաթոլիկներ, բողոքականներ եւ մի շարք ուղղափառ եկեղեցիների ծխականներ նշում են քրիստոնեության գլխավոր տոներից մեկը՝ Քրիստոսի Ծնունդը: Գլխավոր ժամերգությունը տեղի է ունեցել Բեթղեհեմում, որտեղ ծնվել է Հիսուս Քրիստոսը: Դեկտեմբերի 24-ի երեկոյան Բեթղեհեմում տեղի է ունեցել Սուրբ Ծննդյան երթ՝ Երուսաղեմի լատին պատրիարք Ֆուադ Տուալեսի գլխավորությամբ: Երթի վերջնական կետը Սուրբի հրապարակն էր, որտեղ գտնվում է Սուրբ Ամենափրկչի եկեղեցին: Սուրբ Ծննդյան պատարագին ներկա էին Պաղեստինի ազգային վարչակազմի ղեկավար Սահմուդ Աբասը, Հորդանանի արտաքին գործերի նախարար Նասեր Ջուդեյն, Եվրամիության դիվանագիտության ղեկավար Քեթրին Էշթոնը: Հոռնի Սուրբ Պետրոսի տաճարի առջեւի հրապարակում Ֆրանցիսկոս պապը՝ որպես Սուրբ աթոռի հովվապետ, կատարեց Սուրբ Ծննդյան իր առաջին պատարագը:



ԻՐԱՎԻ ԴԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍ ԵՆՔ ԱՌՎԵԼԱԳՈՒՅՆԱ ՎԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ ՀԵՏ, ՈՎՔԵՐ ԸՆՏՐԵԼ ԵՆ ՏԱՐԲԵՐՎՈՂ ՎԵԿՏՈՐ»



Դեկտեմբերի 20-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ:

Անդրադառնալով արտաքին քաղաքական ոլորտին՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց. «Վրաստանը պատրաստ է առավելագույնս համագործակցել բոլոր նրանց հետ, ովքեր ընտրել են արտաքին քաղաքական միտման Վրաստանից տարբերվող վեկտոր»: Նա նշեց, որ Վրաստանը միտված է ակտիվորեն (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Հանդիպմանը արժարծվեցին ինչպես արտաքին քաղաքական, Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների խորացման, այնպես էլ՝ ներքին քաղաքական հարցերին վերաբերող հարցեր:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՄԱՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳԵՂԱԿԸ ՌՈՒՍԱՄԱՏԱՆԻ ԿՈՂՄՈՒՄ Է՛»

Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը հնարավոր չէ այնքան ժամանակ, քանի դեռ ռուս զինվորականները չեն հեռացել Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի տարածքից:



Այդ մասին Վրաստանի կառավարության նախկին ղեկավար Բիծինա Իվանիշվիլին հայտարարել է Forbes հանդեսին տված հարցազրույցում, որը հրատարակվել է դեկտեմբերի 24-ին: «Այժմ գնդակը Ռուսաստանի կողմում է: Մենք պատրաստ ենք վերականգնել դիվանագիտական հարաբերությունները, բայց դա (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՆՈՐՅՐԱՐԱՆ

ԱՐՏԱՅԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԾԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ

Դեկտեմբերի 24-27-ին Վրաստանի խորհրդարանը արտահերթ նստաշրջանում արագացված կարգով ընդունեց մի շարք օրինամախագծեր:

Ինչպես հայտարարեց խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, վերջին տարիներին խորհրդարանում հաստատվել է հակոտնյա պրակտիկա, երբ օրինամախագծերը, ժամանակի սղության պատճառով, ընդունվում են արագացված կարգով: Արտահերթ նստաշրջանին խորհրդարանական փոքրամասնությունը բարձրացրեց նախնական կալանքում գտնվող, Վրաստանի նախկին վարչապետ Վանո Մերաբիշվիլու՝ իր վրա ճնշում գործադրելու մասին հայտարարության եւ Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուզունավայի լիազորություն-

ների դադարեցման մասին Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշման նպատակահարմարության հետաքննության ժամանակավոր հանձնաժողովի հիմնման հարցը: Սակայն, խորհրդարանական մեծամասնությունը դրա հետ չհամաձայնվեց, եւ այդ հարցը օրակարգում չներդրվեց: «Խորհրդարանի բյուրոն սպասում է Արդարադատության բարձրագույն խորհրդի եւ քրեակատարողական նախարարության կողմից անցկացվող ներքին հետաքննության արդյունքներին եւ, միայն (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՄԱՏԱՆ-ՆԱՏՕ

ԱՆՅՎԱՅՎԵՅ ԱՆՅԱՆՍԻ ԻՆՏԵԳՐԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ



Դեկտեմբերի 23-ին, Վրաստանի կառավարական գրասենյակում, անցկացվեց ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման հարցերով հանձնաժողովի հերթական նիստը, որը վարում էր Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:

Ցրագիրը եւ 2013 թվականին այլսահին անդամագրվելու ուղղությամբ Վրաստանի ձեռնարկած քայլերն էին: Բննարկվեց նաև 2014 թվականի գործողության ծրագիրը: «ՆԱՏՕ-ի կողմից ամենամյա ազ-

Օրակարգի գլխավոր հարցը Վրաստանի ամենամյա ազգային

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

